Երկրորդ հաղորդում

Քրիստոսը՝ որպես Ազատագրիչը և Նա, ով մեզ ավելի քան հաղթողներ է դարձնում

Գրվածքների ընթերցում. Հռմ 8:2, 31-39

I. Մենք կարող ենք Քրիստոսին՝ որպես մեր Ազատագրիչի, փորձառաբար ապրել, վայելել ու արտահայտել կյանքի Հոգու օրենքի շնորհիվ՝ Հռմ 8:2.

Ա. Հռոմեացիներին ուղղված թղթի 8-րդ գլխի կյանքի Հոգու օրենքը վայելելը մեզ մտցնում է Հռոմեացիներին ուղղված թղթի 12-րդ գլխի Քրիստոսի Մարմնի իրականության մեջ. այս օրենքը գործում է մեր մեջ, երբ ապրում ենք Մարմնում և Մարմնի համար՝ 8:2, 28-29, 12:1-2, 11, Փլպ 1:19:

Բ. Յուրաքանչյուր կյանք օրենք ունի և ինքնին օրենք է. Աստծու կյանքը բարձրագույն կյանքն է, իսկ այս կյանքի օրենքը բարձրագույն օրենքն է՝ հմմտ Հվի 1:4-5, 12:24, 14:6ա, 10:10բ, Ա Կրթ 15:45բ:

Գ. Եռամեկ Աստված մարմնացման, խաչելության, հարության և համբարձման միջոցով պատրաստվեց և դարձավ կյանքի Հոգու օրենքը, որը տեղադրվել է մեր հոգու մեջ՝ որպես «գիտական» օրենք՝ ինքնաշխատ սկզբունք. սա Աստծու տնտեսության մեջ եղող մեծագույն բացահայտումներից, նույնիսկ վերականգնած մեծագույն դրույթներից մեկն է՝ Հռմ 8:2-3, 11, 34, 16:

Դ. Կյանքի Հոգու օրենքը աստվածային կյանքի ինքնաբերական զորությունն է. դա աստվածային կյանքի բնական հատկությունն ու ներհատուկ, ինքնաշխատ գործառույթն է՝ խ. 2, Փլպ 2:13, Եզկ 36:26-27, Եսյ 40:28-31, Եբր 12:2ա, Փլպ 4:13, Կղս 1:28-29:

Ե. Մինչ պահպանում ենք կապը Տիրոջ հետ՝ շարունակելով շփվել Նրա հետ, կյանքի Հոգու օրենքը, աշխատում է ինքնաշխատ, ինքնաբերական կերպով և առանց ջանքերի.

1. Մենք պետք է դադարեցնենք մեր սեփական պայքարն ու ջանքերը՝ Գղտ 2:20ա, հմմտ Հռմ 7:15-20.

ա. Եթե չենք տեսել, որ մեղքը օրենք է, և որ մեր կամքը երբեք չի կարող հաղթահարել այս օրենքը, մենք գտնվում ենք Հռոմեացիներին ուղղված թղթի 7-րդ գլխի ծուղակում. մենք երբեք չենք հասնի Հռոմեացիներին ուղղված թղթի 8-րդ գլխին:

բ. Պողոսը նորից ու նորից էր կամենում, բայց արդյունքը միայն ձախողումն էր. մարդը կարող է լավագույն դեպքում որոշումներ կայացնել՝ 7:18:

գ. Երբ մեղքը մեր ներսում քնած է, սոսկ մեղք է, բայց երբ այն մեր մեջ արթնանում է բարին անելու մեր ցանկության պատճառով, այն

դառնում է «չարը». «Ուրեմն այս օրենքն եմ գտնում իմ մեջ՝ բարին անել կամեցողի. այսինքն՝ չարը ներհատուկ է ինձ»՝ խ. 21:

դ. Կամենալու փոխարեն՝ մենք պետք է մեր միտքը սևեռենք հոգուն և քայլենք հոգու համաձայն՝ 8:6, 4, Փլպ 2:13:

2. Մենք պետք է համագործակցենք ներքնակվող, ներդրված, ինքնաշխատ և մեր մեջ գործող Աստծու հետ՝ աղոթելով և կախվածության հոգի ունենալով, որպեսզի պահպանենք մեր հաղորդակցությունը կյանքի Տիրոջ և աշխատանքի Տիրոջ հետ՝ Ա Թես 5:17, Եփս 6:17-18:

3. Մենք պետք է հոգանք մեր հոգում կյանքի զգացողության համար՝ մնալով կյանքի հաղորդակցության, աստվածային կյանքի հոսքի մեջ, որպեսզի կյանքի Հոգու օրենքը գործի՝ Հռմ 8:6, 16, Ա Հվի 1:2-3, 6-7:

Զ. Քրիստոսի Մարմնում մեր ապրելու և ծառայելու միակ բանալին կյանքի Հոգու օրենքն է, որը գործում է մեր մեջ.

1. Կյանքի Հոգու օրենքը մեզ դարձնում է Աստված կյանքով, բնությամբ և արտահայտությամբ, բայց ոչ Աստվածությամբ՝ մեզ հաղորդելով Աստծու անդրանիկ Որդու ձևը, որպեսզի մենք Նրա ընդհանրական արտահայտությունը դառնանք՝ Հռմ 8:2, 29:

2. Կյանքի Հոգու օրենքը մեզ կազմությամբ դարձնում է Քրիստոսի Մարմնի անդամները՝ ամեն տեսակի գործառույթներով՝ Եփս 4:11-12, 16:

Է. Մենք կարող ենք համագործակցել մեր ներսում գործող Եռամեկ Աստծու՝ որպես կյանքի Հոգու օրենքի հետ՝ «միացնելով» այդ օրենքը հետևյալ կերպերով.

1. Մենք պետք է քայլենք հոգու համաձայն՝ ապրենք հոգում՝ Հռմ 8:4, հմմտ Սղմ 23:3.

ա. Քրիստոսին փորձառաբար ապրելու գաղտնիքը Նրա մեջ լինելն է՝ Մեկի, ով զորացնում է մեզ՝ ամեն բան անելու համար, իսկ Նրա մեջ լինելու գաղտնիքը մեր հոգում լինելն է՝ Փլպ 4:12-13, 23:

բ. Քրիստոսի մեջ ապրելու գործնականությունը մեր հոգում մեր ապրելն է. Պողոսը Հռոմեացիներին ուղղված թղթում շեշտադրում է, որ այն, ինչ մենք ենք (2:29, 8:5-6, 9), ինչ ունենք (խխ. 10, 16) և ինչ Աստծու հանդեպ անում ենք (1:9, 7:6, 8:4, 12:11), պետք է մեր հոգում լինի.

1) Որպեսզի ապրենք մեր հոգում, մենք պետք է հապաղենք Տիրոջ առջև, որպեսզի Նրան հայենք՝ Հիսուսին հաղորդակցության մեջ աղոթելով, սուզվենք Նրա երեսի մեջ, հագենանք Նրա գեղեցկությամբ և ճառագենք Նրա գերազանցությունը՝ Բ Կրթ 3:16, 18, Սղմ 27:4, հմմտ Մտթ 6:6, 14:23, Ելց 33:11ա, 34:4, ծթգ 2:

2) Մեր հոգում ապրելու համար մենք պետք է անդադար աղոթենք՝ Ա Թսղ 5:17, հմմտ Հվի 20:22, Ողբ 3:55-56, Հռմ 10:12-13:
3) Մեր հոգում ապրելու համար պետք է աստվածային կյանքի հաղորդակցության մեջ մնանք՝ աստվածային լույսի մեջ քայլելով՝ Ա Հվի 1:2-3, 6-7:

2. Մենք կարող ենք Հոգու բաները մտածել՝ մեր միտքը հոգուն սևեռել՝ Հռմ 8:5-6.
   ա. Մենք պետք է անսանք մեր հոգուն՝ ուշադրություն դարձնելով մեր հոգու զգացողությանը, որպեսզի չվշտացնենք Հոգուն և չմարենք Հոգուն՝ Մղք 2:15-16, Եփս 4:30, Ա Թսղ 5:19:
   բ. Մենք կարող ենք մեր միտքը հոգուն սևեռել՝ մեր միտքը սևեռելով Աստծու խոսքերին, որոնք հոգի են և կյանք՝ Հվի 6:63, Եսյ 55:8-11:
   գ. Միտքը հոգուն սևեռելը՝ Հոգու բաները մտածելը, նաև նշանակում է մեկ լինել Տիրոջ հետ՝ Քրիստոս Հիսուսի ներքին մասերում եկեղեցու և բոլոր սրբերի համար հոգալու նպատակով՝ Փլպ 2:21, 1:8:
3. Մենք կարող ենք Հոգով մահվան մատնել մարմնի գործերը՝ Հռմ 8:13, Զք 4:6, Գղտ 5:16.
   ա. Մենք պետք է Հոգուն թույլ տանք բնակություն հաստատել և տեղավորվել մեր ներքին էության մեջ՝ Հռմ 8:9, 11:
   բ. Մենք պետք է մնանք եկեղեցական կյանքում, որտեղ խաղաղության Աստված Սատանային ջախջախում է մեր ոտքերի տակ՝16:20, 12:1-2, 11:
4. Մենք կարող ենք առաջնորդվել Հոգով որպես Աստծու որդիներ՝ 8:14.
   ա. Հոգով առաջնորդվել նշանակում է հոգալ մեր մեջ բնակվող բաղադրյալ Հոգու ներքին օծության, շարժման և աշխատանքի համար՝ Ա Հվի 2:20, 27:
   բ. Հոգով առաջնորդվել նշանակում է հոգալ մեր հոգում եղող հանգստի համար, որպեսզի առաջնորդվենք որպես գերեվարվածներ Քրիստոսի հաղթական շարասյան մեջ՝ Բ Կրթ 2:12-14, 7:5-6:
5. Մենք կարող ենք որդիության հոգում Հորն աղաղակել՝ Հռմ 8:15, Գղտ 4:6.
   ա. Երբ «Աբբա՝ Հայր» ենք աղաղակում (Հռմ 8:15), «Հոգին Ինքը վկայում է մեր հոգու հետ, որ մենք Աստծու զավակներ ենք» (խ. 16):
   բ. «Աբբա՝ Հայր» աղաղակելն արտահայտում է մեր Աստծու հետ մեր մտերմիկ հարաբերությունների քաղցրությունը՝ հմմտ Մտթ 18:3:
6. Մենք կարող ենք հառաչել բարեխոսող Հոգում՝ մեր լիակատար որդիությանը, այսինքն՝ մեր մարմինների փրկագնմանը սպասելով՝ Հռմ 8:23, 26-27.

ա. Մեր հառաչանքի մեջ նաև Հոգին է հառաչում՝ մեզ համար բարեխոսելով:

բ. Բարեխոսող Հոգին աղոթում է մեզ համար, որպեսզի մենք կերպարանակցվենք Քրիստոսի՝ որպես Աստծու անդրանիկ Որդու պատկերին՝ խխ. 28-29:

II. Մենք կարող ենք փորձառաբար ապրել, վայելել ու արտահայտել Քրիստոսին՝ որպես Մեկի, ով մեզ ավելի քան հաղթողներ է դարձնում՝ խ. 37.

Ա. Մենք կարող ենք սիրել Աստծուն և փորձառաբար ապրել այն, որ Քրիստոսի սերը մեզ նեղում, սահմանափակում, մղում, հարկադրում, ստիպում և շարժման մեջ է դնում, որպեսզի ավելի քան հաղթենք ամեն բանում՝ խխ. 31-39.

1. Աստծուն սիրելով՝ մենք մասնակցում ենք Աստծու մեջ բովանդակված ողջ հարստությանը՝ Ա Կրթ 2:9-10, հմմտ Բ Տմթ 3:2-4:
2. Քրիստոսի սերը պետք է մեզ նեղի, որպեսզի Աստծուն և սրբերին սիրենք Քրիստոսով՝ որպես մեր սիրով՝ Բ Կրթ 5:14:

Բ. «Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ կարող է մեզ դեմ լինել»՝ Հռմ 8:31, Երմ 31:31-34, Եբր 8:8-10.

1. «Եվ նրանց հետ հավիտենական ուխտ կկապեմ, որ նրանցից երես չեմ դարձնելու, որպեսզի նրանց համար բարին անեմ. և Իմ երկյուղը նրանց սրտերում կդնեմ, որպեսզի երես չդարձնեն Ինձնից: Եվ Ես կուրախանամ նրանց համար, որպեսզի նրանց բարություն անեմ, և նրանց կտնկեմ այս երկրում հավատարմության մեջ Իմ ողջ սրտով ու Իմ ողջ շնչով»՝ Երմ 32:40-41:
2. Այս հավիտենական ուխտը նոր ուխտն է. այս ուխտի համաձայն՝ Աստված չի շրջվի մեզնից, այլ մեզ կտնկի Քրիստոսի՝ մեր բարի երկրի մեջ, և մենք կգնենք, այսինքն՝ ձեռք կբերենք Քրիստոսին Նրա բոլոր տեսանկյուններում՝ ամեն գնով մոռանալով հետևում եղածներն ու դեպի Քրիստոսը ձգտելով՝ խխ. 40-44, Փլպ 3:8-14:

Գ. Աստված Քրիստոսի հետ մեզ է շնորհում բոլոր բաները. ամեն բան, ամեն մարդ ու ամեն իրադարձություն մերն է՝ նրանցը, ովքեր սիրում են Նրան, ու դրանք ծառայում են մեր կատարելագործման համար՝ Հռմ 8:28, 32, Ա Կրթ 3:21-22:

Դ. Քրիստոսը, մեզ համար մեռած ու հարուցանված լինելով, բարեխոսում է մեզ համար Աստծու աջ կողմում՝ Հռմ 8:34.

1. 34-րդ խոսքում Քրիստոսն Աստծու աջ կողմում է, սակայն 10-րդ խոսքում Քրիստոսը հիմա մեր մեջ է՝ մեր հոգում՝ Բ Տմթ 4:22, հմմտ Հվի 1:51, Ծնդ 28:11-22:
2. Հռմ 8:34-ում Քրիստոսն է մեզ համար բարեխոսում, սակայն 26-րդ խոսքում մեզ համար Հոգին է բարեխոսում.

ա. Սրանք ոչ թե երկու Բարեխոսներ են, այլ մեկ՝ Տեր Հոգին՝ Բ Կրթ 3:18:

բ. Նա մեզ համար երկու կողմից է բարեխոսում. մի կողմից՝ դա մեր մեջ եղող Հոգին է, ով հավանաբար նախաձեռնում է բարեխոսությունը մեզ համար. մյուս կողմից՝ դա Տեր Քրիստոսն է, ով Աստծու աջ կողմում է ու հավանաբար ավարտին է հասցնում մեզ համար արվող բարեխոսությունը, որը գլխավորապես այն բանի վերաբերյալ է, որ մենք Նրա պատկերին կերպարանակցվենք ու բերվենք Նրա փառքի մեջ:

Ե. Ոչ մի տառապանք՝ ներառյալ նեղությունը, չարչարանքը, հալածանքը, սովը, մերկությունը, վտանգը և սուրը, մեզ չի կարող զատել Քրիստոսի սիրուց՝ Հռմ 8:35:

Զ. Բոլոր չարչարանքներում մենք գերհաղթում ենք Քրիստոսի միջոցով, ով մեզ սիրեց՝ խ. 37.

1. Այն բանի շնորհիվ, որ Աստված մեր հանդեպ անփոփոխ սեր է տածում, և այն փաստի շնորհիվ, որ Քրիստոսը մեզ համար իրագործել է ամեն բան, ո՛չ նեղությունը, ո՛չ հալածանքը չեն կարող մեզ ճնշել կամ հաղթել. ընդհակառակը, այդ բոլոր բաներում մենք գերհաղթում ենք Նրա միջոցով, ով մեզ սիրեց:
2. Աստծու սերը Նրա հավիտենական փրկության ակունքն է. այս սերը, որից մեզ ոչինչ զատել չի կարող, Քրիստոսի մեջ է և մեր սրտերի մեջ է հեղվել Սուրբ Հոգու միջոցով՝ խխ. 38-39, 5:5, Երմ 31:3:
3. Աստծու փրկության մեջ Աստծու սերը դարձել է Քրիստոսի սերը, որը մեզ համար Քրիստոսի շնորհքով բազմաթիվ սքանչելի բաներ է անում, մինչև որ Աստծու լիակատար փրկությունն իրագործվի մեր մեջ՝ Հռմ 8:35, Օվս 11:4:
4. Այս սքանչելի բաներն Աստծու թշնամուն դրդում են հարձակվելու մեզ վրա ամեն տեսակ տառապանքներով և արհավիրքներով. սակայն այն բանի շնորհիվ, որ մենք արձագանքում ենք Քրիստոսի մեջ Աստծու սիրուն, այս հարձակումները մեր օգտին են ծառայում. ուստի մենք գերհաղթում ենք մեր բոլոր նեղություններում և արհավիրքներում՝ Հռմ 8:35-37, 28:

© 2024 Living Stream Ministry